ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն կոնսերվատորիայի պրոֆեսոր Կարինե Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.33 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՐԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կարինե Կարապետյանը ծնվել է 1948 թվականի հունիսի 16-ին, Երևանում:

Դպրոցն ավարտելուց հետո, 1963-1964թթ. աշխատել է ջոկատավար: Ունենալով բացառիկ երաժշտական տաղանդ, ընդունվել է Սպենդիարյանի երաժշտական դպրոցը, որը գերազանցությամբ ավարտելուց հետո՝ 1968թ. ընդունվել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ բաժինը: Ուսանողության տարիներին մասնակցել է մի շարք փառատոնների Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում, Լատվիայում, Լիտվայում, Հարավսլավիայում, Հունաստանում, Բեռլինում, Գերմանիայում: Կոնսերվատորիան ավարտելուց հետո, 1973թ. հունիսի 29-ին, պետական հանձնաժողովի որոշմամբ ստացել է օպերային երգչուհու որակավորում: Նույն թվականին ընդունվել է Հայիամերգ՝ որպես մենակատար:

1989թ. աշխատանքային հրավերով Կարինե Կարապետյանն ընտանիքի հետ մեկնել է Վիեննա: Անցել է աշխատանքի Վիեննայի Սուրբ Հռիփսիմե առաքելական եկեղեցում՝ որպես երգչախմբի ղեկավար և երգչուհի: Վիեննայում ապրած տարիներին հանդես է եկել բազմաթիվ համերգներով՝ պրոպագանդելով հայ երաժշտությունը:

1998թ. վերադարձել է կրկին կոնսերվատորիա՝ ստեղծելով դափնեկիրների կուրս մինչև 2016թ.:

Կարինե Կարապետյանը մահացել է 2023թ. նոյեմբերի 4-ին:

Կարինե Կարապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի հ.33 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Ալեքսանդր Բարխուդարյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է Կարինե Կարապետյանի ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ